



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

« 04 » փետրվարի 2018 թվականի № 15-Ն

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի № 1421-Ն որոշումը
և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և
«Ագապե» ՍՊ ընկերության միջև 2017 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված Պ-004 «Նավթի և
բնական գազի արտադրանքի բաժանման պայմանագրի» 6-րդ գլխի 6.2 կետի պահանջը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել տեխնիկական խորհրդատվական կոմիտե և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի
2. Տեխնիկական խորհրդատվական կոմիտեին՝ առաջնորդվել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և «Ագապե» ՍՊ ընկերության միջև 2017 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված Պ-004 «Նավթի և բնական գազի արտադրանքի բաժանման պայմանագրի» 6-րդ գլխի 6.2 կետի պահանջներով:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Աշոտ Բարսեղյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ընդերքի գործակալության ընդերքաբանական փորձաքննության և պաշարների հաստատման բաժնի գլխավոր մասնագետ
Կարեն Գասպարյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ընդերքի գործակալության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման բաժնի գլխավոր մասնագետ
Անդրանիկ Աղաբալյան	Տեխնիկական Գիտությունների Թեկնածու (Տ.Գ.Թ.) «Գեոէկոնոմիկա» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ (համաձայնությամբ),
Մարիամ Սարգսյան	«Ագապե» ՍՊ ընկերության երկրաֆիզիկոս (համաձայնությամբ),
Դավիթ Խոնդկարյան	«Ագապե» ՍՊ ընկերության երկրաբան (համաձայնությամբ),
Թիմ Փափուորթ	«Ագապե» ՍՊ ընկերության խորհրդատու երկրաֆիզիկոս (համաձայնությամբ):